PROJECT INTER-INVEST

Նարեկ Նալբանդյանից
HETQ.am-ի լրագրող Տիրայր Մուրադյանին

Հարգելի՛ պարոն Մուրադյան,

Ի պատասխան Ձեր կողմից հնչեցված հարցերի հայտնում ենք, որ մեր կողմից ձեռքբերված գույքերի վաճառքների մասին տեղեկությունները մեզ հասել են բոլորին հասանելի տարբեր հրապարակային աղբյուրներից (օրինակ՝ Սևանի Ծովազարդ համայնքում գտնվող հյուրանոցային համալիրը երկար ժամանակ վաճառվում էր grav.am կայքով, Ծաղկաձորում գտնվող հյուրանոցը երկար ժամանակ վաճառվում էր ՀՀ ՏԿԵՆ Պետական Գույքի Կառավարման Կոմիտեի կայքում, ինչ վերաբերվում է իմ ընտանիքի կողմից մոնումենտի առանձնատան ձեռքբերմանը, այն ևս եղել է հրապարակային վաճառքի ենթակա գույք:

Վերոնշյալ գույքերի նկատմամբ մեր հետաքրքրությունը առաջացել է, և գործարքները տեղի են ունեցել զուտ նրանց շահավետ լինելու տրամաբանությամբ:

Գործարքների առարկա հանդիսացող գույքերի նկատմամբ Ձեր կողմից նշված խնդիրների մասով մենք չէինք կարող տեղեկություն ունենալ, քանի որ գործարքների կատարման մրցույթներին մասնակցելուց, Կադաստրի Կոմիտեից միասնական տեղեկանք ստանալուց, և գործարքների վերջնական պետական գրանցումը ձևակերպելուց որևէ խոչընդոտի չենք հանդիպել, ուստի բոլոր գործարքները կատարվել են օրինական և բնականոն գործընթացներին համապատասխան ընթացակարգով:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե արդյո՞ք գործարքները կնքվել են իշխանության և իրավապահների հետ ունեցած հնարավոր կապերի շնորհիվ, ապա ցանկանում ենք նշել, որ մենք ղեկավարվում ենք ազնիվ, արդար և մրցակցային գործարարության սկզբունքով և հակառակի մասին Ձեր կողմից առաջ քաշված կասկածը կարող էր ողջամիտ համարվել, եթե առկա լինեին օբյեկտիվ տվյալներ այն մասին, որ այլ անձիք ևս ցանկացել են ձեռք բերել այդ գույքերը և նրանց համար ստեղծվել են խոչընդոտներ գործարքները կնքելու հարցում:

Հարգանքով՝
Ն. Նալբանդյան

Yeghvard, Komitas 41 / +374 60 70 88 88 / info@projectinterinvest.com / www.projectinterinvest.com